

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 օգոստոսի 2015 թ.

N 531-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 219- Ն ՈՐՈՇՈՒՄՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածներին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 25-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի ջրային տնտեսության հսկողության տեսչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 219-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչությունը (այսուհետ՝ տեսչություն) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության (այսուհետ՝ վարչություն) աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն օրենքով, իսկ առանձին դեպքերում նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այլ իրավական ակտերով նախատեսված, իրականացնում է վերահսկողական գործառույթներ և կիրառում պատասխանատվության միջոցներ՝ ջրային համակարգերի բնագավառում հանդես գալով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անունից:

2. Տեսչությունը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր) որոշմամբ:

3. Տեսչությունը գործում է իր կանոնադրության համաձայն, որը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի (այսուհետ՝ վարչության պետ) ներկայացմամբ, հաստատում է հիմնադիրը:

4. Տեսչության լիազորությունները սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, հիմնադրի որոշումներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

5. Տեսչությունն օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրավունք ունի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու

պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Տեսչությունն ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

7. Տեսչության գտնվելու վայրն է՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Փետրվարի 20/1:

II. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Տեսչության նպատակները և խնդիրներն են՝

1) պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի օգտագործման և պահպանման նկատմամբ օրենքներով և այլ իրավական ակտերով վարչությանը վերապահված իրավասությունների իրականացումը՝ վերահսկողության իրականացման մասով.

2) ջրային համակարգերի օգտագործման ընթացքում իրավախախտումների, այդ թվում՝ նաև ապօրինի դեպքերի բացահայտումը, կանխարգելումը և բացահայտված իրավախախտումների վերացումը՝ վերահսկման մասով:

III. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Տեսչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) վերահսկողություն է իրականացնում

ա. ջրային համակարգերի օգտագործման թույլտվությամբ նախատեսված պահանջների նկատմամբ,

բ. ջուրը՝ ջրամատակարարման և ջրօգտագործման կանոնների խախտմամբ օգտագործելու (այդ թվում՝ ինքնակամ օգտագործելու), ջուրն անտնտեսվար օգտագործելու, ինքնակամ հիդրոտեխնիկական շինարարական աշխատանքներ կատարելու նկատմամբ (ջրային համակարգերի մասով),

գ. ջրային համակարգերը և հարմարանքները, այդ թվում՝ ջրամատակարարման համակարգերի, բազմաբնակարան շենքերի մուտքագծերի, բնակարանների ու անհատական բնակելի տների ջրաչափերը, չափիչ-կարգավորիչ սարքերը վնասելու, չկապարակնքելու, կապարակնիքները փոխելու (կեղծելու) կամ դիտավորյալ պոկելու, օգտագործման կանոնները խախտելու նկատմամբ,

դ. ջրամատակարարման, ջրահեռացման և ոռոգման ջրի մատակարարման պայմանագրերի առկայության և դրանցով ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ,

ե. ջրային համակարգերի սանիտարական պահպանման և անօտարելի գոտիները խախտելու նկատմամբ,

զ. արտակարգ իրավիճակ առաջացնող հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության նորմերը խախտելու կամ դրանց ցուցանիշները նվազեցնելու նկատմամբ,

է. առանց ջրային համակարգերի օգտագործման թույլտվության ջրային համակարգերն օգտագործելու, ջրային համակարգերի օգտագործման թույլտվության պայմանների խախտմամբ ջրային համակարգերն օգտագործելու նկատմամբ,

ը. ջրային համակարգերի վիճակի վրա ազդող ինքնակամ աշխատանքներ կատարելու նկատմամբ,

թ. հանգստի և սպորտի համար ջրային ռեսուրսներից օգտվելու կանոնները (պայմանները) խախտելու նկատմամբ (ջրային համակարգերի մասով),

ժ. ջրային համակարգերի պահպանման անվտանգ և արդյունավետ շահագործման նկատմամբ,

ժա. մատակարարվող ջրի հաշվառման և իրացման նկատմամբ.

2) ջրային համակարգերի օգտագործման և պահպանության հետ կապված իրավահարաբերությունների սուբյեկտների մոտ իրականացնում է տեսչական ստուգումներ.

3) պետական տեսչական ստուգումների գործերի վարույթի ընթացքում ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսուչներն օրենքով սահմանված կարգով իրականացնում են քննություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կայացնում որոշումներ.

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսուչներն իրականացնում են վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ.

5) հայտնաբերված ապօրինությունների վերացման և հետագայում դրանց կանխարգելման նպատակով կիրառում է համապատասխան միջոցներ, այդ թվում նախազգուշացում, զգուշացում, չափիչ-կարգավորիչ սարքավորումների կապարակնքում, և սահմանված կարգով տալիս հանձնարարականներ.

6) հայտնաբերված ապօրինությունների և խախտումների վերաբերյալ վարչական վարույթն իրականացվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով:

10. Ոռոգման ու խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերում ապօրինությունների կանխումն ու վերացումն, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է նաև այդ համակարգերն օգտագործող կազմակերպությունների կողմից՝ իրավական ակտերի և կնքված պայմանագրերի համաձայն:

11. Տեսչության աշխատողները, տեսչության կանոնադրական գործառույթներն իրականացնելիս, իրավունք ունեն կրելու համազգեստ, որի ձևը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

12. Տեսչությունն իրականացնում է նաև օրենքներով և այլ իրավական ակտերով վարչությանը վերապահված վերահսկողական բնույթի այլ գործառույթներ:

13. Սույն բաժնում նշված գործառույթները կիրառվում են ինչպես ջրամատակարարների, այնպես էլ ջրօգտագործողների (ջուր սպառողների) նկատմամբ:

IV. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

14. Տեսչությունը կառավարում և նրա գործունեությունը համակարգում է վարչության պետը:

15. Տեսչությունը ղեկավարում է տեսչության պետը, որը միաժամանակ հանդիսանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային համակարգերի օգտագործման և պահպանության գլխավոր պետական տեսուչը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է Քաղաքացիական ծառայության մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

16. Տեսչության պետն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով, վարչության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

17. Տեսչության պետը պատասխանատու է տեսչության կողմից վերահսկողական գործառույթների իրականացման և պատասխանատվության միջոցների կիրառման, տեսչական աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև դրանց՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի համապատասխանության համար:

18. Տեսչության պետը հաշվետու է վարչության պետին, իսկ քաղաքացիական ծառայության մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև վարչության աշխատակազմի ղեկավարին:

19. Տեսչության պետը՝

1) ղեկավարում է տեսչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է տեսչության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար:

2) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառի, նպատակների ու խնդիրների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում վարչության պետին:

3) իր իրավասության սահմաններում արձակում է կարգադրություններ և տալիս ցուցումներ ու հանձնարարություն, առանց լիազորագրի հանդես է գալիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և տեսչության անունից, ինչպես նաև տալիս է տեսչության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

4) իր իրավասության սահմաններում վարչության աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ տեսչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ:

5) վարչության պետին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն տեսչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:

6) ապահովում է վարչության պետի հրամանների և ցուցումների, հանձնարարականների ու առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում է վարչության պետին.

7) առաջարկություններ է ներկայացնում վարչության պետին՝ տեսչության կառուցվածքի և աշխատողների թվի, ինչպես նաև տեսչության խորհրդակցական մարմիններ ստեղծելու մասին.

8) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.

9) վերահսկողություն է իրականացնում տեսչության օգտագործմանը հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

10) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

20. Տեսչության պետի բացակայության դեպքում այդ պաշտոնը զբաղեցնում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողը՝ Քաղաքացիական ծառայության մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով:

V. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

21. Օրենքով, այլ իրավական ակտերով, վարչության և սույն կանոնադրությամբ տեսչությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է վարչության աշխատակազմը:

22. Տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների աշխատողները քաղաքացիական ծառայողներ են:

23. Տեսչության վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ